

եալք և ուսանողք կրնան համարուիլ։
Այս վերոյ գրեալ պայմաններէն դուրս
ըստ վճռոց Սուրբ Գրոց և ըստ հա-
ւասոց ողջամիտ վարդապետաց՝ ոչ
չշմարիտ Քրիստոնեոց կոյ և ոչ Առ-
տուծոց որդի։

Ապա ուրեմն ամեն Քրիստոնեաց
իւր կողուած օրէն պէտք է աշխատի
իւր երկնաւոր Հօր արժանի որդի լի-
նելու, հաւատուիք, հնազանդութեամբ
և սրբութեամբ, և Որպէս զի տեսնեն
մօրդիկ նոցա բարի գործքերը և փա-
ռաւորեն նոցա երկնաւոր Հոյրը ։



Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Մահն անհրաժեշտ է մահկանաց-
ուաց համար, այն որ կը ծնի, պէտք է
մեռնի։ Բայց մահուամբ մեզմէ բաժ-
նուողը բնական ցաւ մի կ'առ թէ մեր
սրտին։ այս ցաւն այնքան սաստիկ,
այնքան գժուարատիլիք կը լինի։ ուրան
հանգուցեալը արժանիք կ'ունենաց և
ընտիր բարեմանութեամբը զսրդար-
ուած կը լինի։

Ամսոյս վերջերը դուժեցին լուսադիքը
վսեմաշուր Պալեան Յակոբ պէշի կողա-
կից նազելուհի Բեմակէ տիենով տարա-
ժամ մահը իցաւ սրտի Պալեան և Պար-
տիզաննեան գերդաստանաց։ Այսպիսի
վատարիթ զրկանաց համար զգայուն
սրտերն չեն կարող չցաւիլ։ քանզի
հանգուցելոյն գործիլի ցիրեբերէն եւ
անզուգական բարեմանութիւններէն

զրկուած կը լինի թէ ազգը և թէ նո-
րին պայծառափացը գերդաստանը, զըր-
կանիք մի, որ նկատմամբ ենթակացին
անդարմաննելի է։

Սակայն քրիստոնէան կրօնը որ ա-
մէն սյսպիսի պարագաներու մէջ հա-
ւասացելոց վերոյ իւր հզոր ազգեցու-
թիւնը կ'ընէ, անշուշտ պէտք է դար-
մանէ Քրիստոնէայ սգաւորին սրտին
վիշտը, որ միշելով հանգուցելոյն ա-
ռաքինութիւնները և գործիլի վարուց
անքծութիւնը, ապահով կը լինի իւր
սիրելոյն յաւիսանական հանգստեան
վերայ և այնպէս միխթարութիւն կը
դդայ իւր հոգւոյն մէջ, զոր չէ կարող
տալ աշխարհը։

Զերմեռանգն սրտով կը մաղթեմիք
և մէք որ Սուրբ Հոգին Աստուած հաս-
նի յօգնութիւն և միխթարէ թէ հան-
գուցելոյն ամուսին վակէ։ Յակոբ պէշին
և թէ հայրը՝ Աւետիս աղա Պարտիզան-
նեան իրենց դառն տրամութենէն և
հանգուցելոյն շնորհէ յաւիսենական
հանգիստ յերկնից արքայութեանն ՚ի
խորանս սրբոց։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Մէկ քանի ամիս առաջ Խլեկուա-
նուուն Երէմիշցի հարուաս Յոյն վաճա-
ռական մը Տաճիկ գիւղացիէ մը սո-
նելիքն ուղած ժամանակ՝ պարապառա-
նը պարտքը ըլ վճարելէ ՚ի զատ, տե-
ղոս Կառավարութեան կը զիմէ ըսե-
լով թէ միշտով Յոյն վաճառականը
կրօնիս հայհոյեց։ իսկոյն Կառավա-
րութեան հրամանաւ հոս բերուեցաւ-
Դատախացն Տաճիկ վկայներով կը
հաստատէր, իսկ վաճառականը բոլո-
րովին կը մերժէր։ Կառավարից զննին
հոս բանապիկելով կուղէր գործը վեր-
ջացնել, բայց ամսոյս մէկին Պօլսէն եւ
կած հեռագիր մը կը հրամացէր ՚ի Տիգ-
րամակերտ երեք տարի աքատ երթալ-
ուստի երկու օրէն յետոյ մէկիեցաւ։

— Ամսոյս մէկին Պօլսէն եկած հե-